ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ: ԽՈՑԵԼԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅՑՈՂՆԵՐ

Նախորդ դասի շրջանակներում քննարկվեցին՝

- փախստականի կարգավիճակի ու ապաստանի հայցման այն ընթացակարգային կարգավորումները, որոնք սահմանվել են ներպետական օրենսդրությամբ և այդ ընթացակարգերի արդյունավետությունն ապահովող օրենսդրական երաշխիքները:

Այս դասում Ձեզ կներկայացնենք՝

- ապացուցման բեռի բաշխման կանոնը և այդ կանոնի կիրառման հարաբերական չափորոշիչները,
- ծագման երկրի մասին տեղեկությունների հավաքագրման և գնահատման կանոնները:

Այդուհետ կանդրադառնանք հատուկ պաշտպանության կարիք ունեցող հայցողների իրավունքների երաշխավորման սկզբունքին:

Ապացուցման հիմնախնդիրները

Ապացուցման բեռը: Փախստականի կարգավիճակի շնորհման ընթացակարգում առանցքային նշանակություն ունի ապացուցման բեռի բաշխման կանոնը: Որպես ընդհանուր կանոն՝ հայցողն է կրում իր կողմից մատնանշվող հանգամանքների ապացուցման պարտականությունը: Այդուհանդերձ, նշված կանոնը չի կարող բացարձականացվել՝ հաշվի առնելով ապաստան հայցողի կարգավիճակի առանձնահատկությունները: Անձինք, փախչելով հետապնդումներից, մեծ մասամբ մեկնում են առաջին անհրաժեշտության պարագաներով, հաճախ՝ նույնիսկ առանց անձնական փաստաթղթերի: Ուստի խիստ ձևական և անիրական կլիներ փախստականների իրավունքների պաշտպանության հայեցակարգը, եթե յուրաքանչյուր մասնավոր դեպքով հայցող անձից պահանջվեր իր կողմից ներկայացվող նկարագրությունների առարկայական ապացուցում:

Ապացուցման հայեցակարգի սկզբունքային առանձահատկություններից է այն, որ հայցողի ապացուցման *պարտականությունը հանգում է ընդամենը գործի վերաբերյալ* **հստակ և համակարգված հանգամանքների ներկայացմանը**: Ընդ որում, հայցողը գործին վերաբերող փաստերը կարող է ներկայացնել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր կերպով:

Հայցողի ապացուցելու պարտականությունը համարվում է կատարված, երբ վերջինս ներկայացնում է գործին վերաբերող իրական փաստական հանգամանքների ամբողջություն, որի հիման վրա հնարավոր կլինի կայացնել պատշաճ որոշում: Հաջորդիվ, վարչական մարմնի պարտականությունն է պարզել և գնահատել գործի բոլոր վերաբերելի փաստերը: Նշված մոտեցումն իր հերթին պարտավորեցնում է վարույթ իրականացնող վարչական մարմնին իրականացնել գործի ex officio (ի պաշտոնե) քննություն՝ սեփական նախաձեռնությամբ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները գործի փաստական հանգամանքները բացահայտելու և գնահատելու համար:

Կարևոր է, սակայն, ընդգծել այն հանգամանքը, որ ապացույցների գնահատման ընթացքում և որպես հետևանք՝ որոշման կայացման համար էական է ոչ թե յուրաքանչյուր առանձին փաստի հաստատումը կոնկրետ ապացույցով, այլ վարչական մարմնի փիրապետության տակ գտնվող տեղեկատվության (այդ թվում՝ հայցողի հայտարարությունների և ձեռք բերված այլ ապացույցների) լույսի ներքո ներքին համոզմունք ձևավորելը, որ հայցն առավելապես հավաստի է, քան հակառակը:

«Չփարատված կասկածներն ի օգուտ հայցողի մեկնաբանելու» սկզբունք: Ինչպես միջազգային պրակտիկայում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում գործում է **«չփարատված կասկածներն ի օգուտ հայցողի մեկնաբանելու» սկզբունքը**: Վերջինիս համաձայն՝ այն դեպքերում, երբ հայցող անձի հայտարարություններն ամբողջությամբ հնարավոր չէ հիմնավորել վարչական վարույթի արդյունքում ձեռք բերված ապացույցներով՝ հայտարարությունները պետք է գնահատվեն որպես հավաստի: Այս սկզբունքը, սակայն, չի ենթադրում, որ ցանկացած չհաստատված հայտարարություն կարող է որակվել որպես ճշմարիտ: Հավաստիության կանխավարկածը գործում է **բացառապես արժանահավատ** հայտարարությունների կապակցությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր հայտարարության արժանահավատությունը պետք է գնահատվի հայցողի կողմից տրված մնացյալ բացատրությունների, ինչպես նաև վարչական վարույթով ձեռք բերված ապացույցների համատեքստում (որքանով որ դրանք համատեղելի կլինեն խնդրո առարկա հայտարարության հետ):

Ավելի մանրամասն ծանոթացեք «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասում:

Հարկ է նկատել, որ նմանօրինակ մոտեցում է արձանագրված նաև միջազգային իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դիրքորոշումն է հայտնել ապացուցման բեռի բաշխման կանոնի վերաբերյալ՝ նշելով, որ «...հաշվի առնելով այն առանձնահատուկ կարգավիճակը, որում հայտնվում են ապաստան հայցողները, խիստ կարևոր է ապահովել նրանց «չփարատված կասկածներն ի օգուտ հայցողի մեկնաբանելու» սկզբունքով, երբ խոսքը վերաբերում է նրանց հայտարարությունների և դրանց կապակցությամբ ներկայացված փաստաթղթերի արժանահավատության գնահատմանը: Այդուհանդերձ, եթե առկա է տեղեկատվություն, որը կասկածահարույց է դարձնում հայցողի հայտարարությունների ճշմարտացիությունը, հայցողը պետք է տրամադրի հիմնավոր բացատրություն նման անհամապատասխանության կապակցությամբ»:

Հարկ է ի նկատի ունենալ նաև այն, որ չփարատված կասկածներն ի օգուտ հայցողի մեկնաբանելու սկզբունքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ ապացույցներ ձեռք բերելու կապակցությամբ վարչական վարույթի շրջանակներում ձեռնարկվել են **բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցները,** սակայն այդ **միջոցներն անբավարար են եղել** առկա կասկածները փարատող ապացույցներ ձեռք բերելու առումով:

Բերեք համապատասխան օրինակ:

Ծագման երկրի մասին տեղեկություններ: Փախստականի առանձին պնդումների հիմնավորվածությունը, ինչպես նաև նրա ընդհանուր վստահելիությունը գնահատելիս կարևոր դեր ունեն ծագման երկրի մասին տեղեկությունները: Օրենքի համաձայն՝ այդ տեղեկությունները պետք է լինեն արդի, ստույգ և տարբեր վստահելի աղբյուրներից ձեռք բերված: Արդիականության պահանջը չպետք է մեկնաբանվի այնպես, որ բոլոր դեպքերում նախապատվությունը տրվի առավել ժամանակակից տեղեկություններին: Թեև փախստականի կարգավիճակի մասին որոշումը պետք է հիմնվի ապագա հետպանդումների երկյուղի վրա, սակայն դրա գնահատման համար վերաբերելի են նաև անձի նախկին փորձը և վիճակը, ինչպես նաև ծագման երկրում իրավիճակի զարգացման միտումները, որի համար միանգամայն վերաբերելի են համապատասխան անցյալ ժամանակահատվածներին վերաբերող տեղեկությունները:

Աղբյուրների ստույգ ու վստահելի լինելը որոշելու համար կարևոր է ինչպես աղբյուրի հեղինակությունը, այնպես էլ դրա հեղինակի անկախությունը և անկողմնակալությունը, նյութի ընդհանուր հավասարակշռվածությունը, էմպիրիկ հիմքն ու կիրառված մեթոդաբանությունը:

Փորձեք պատասխանել այն հարցին, թե ինչպես է որոշվում այդ տեղեկությունների ստուգությունը:

Խոցելի և հատուկ պաշտպանության կարիք ունեցող հայցողներ

1951 թվականի Կոնվենցիան հատուկ դրույթ չի պարունակում անչափահաս անձանց կամ հոգեկան հիվանդություններով տառապող անձանց փախստականի կարգավիճակի տրամադրման առանձնահատկությունների վերաբերյալ: Ուստի պետք է ելնել այն կանխավարկածից, որ 1951 թվականի Կոնվենցիայով ամրագրված փախստականի սահմանումը հավասարապես կիրառելի է բոլոր անհատների նկատմամբ: Միաժամանակ, հաշվի առնելով նշված անձանց հատուկ կարիքները, օրենքը, միջազգային պրակտիկային համահունչ, սահմանում է նման անձանց համար լրացուցիչ երաշխիքներ: Ընդ որում, իրավասու մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր և անհրաժեշտ գործողությունները հնարավոր սեղմ ժամկետներում բացահայտելու հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներին: Բերեք այս կանխավարկածին կողմ փաստարկներ:

Այն դեպքերում, երբ անչափահասին ուղեկցում է ընտանիքի անդամ, փախստականի կարգավիճակի տրամադրումը որոշվում է միասնական դիմումի շրջանակներում: Այլ է իրավիճակը, երբ անչափահասն անուղեկից է կամ ընտանիքից անջատ: Նման դեպքերում ապաստանի ընթացակարգի շրջանակներում միգրացիայի հարցերով լիազոր մարմինը նշանակում է ներկայացուցիչ, որը պարտավոր է պաշտպանության տրամադրման ընթացակարգի շրջանակներում պատշաճ կերպով ներկայացնել անչափահասի լավագույն շահերը: Ընդ որում, ներկայացուցիչ նշանակվելուց ի վեր լիազոր մարմնի կողմից իրականացվող յուրաքանչյուր գործողություն (այդ թվում՝ հարցազրույցը) կատարվում է ներկայացուցչի մասնակցությամբ: Օրենսդիրը որպես լրացուցիչ երաշխիք նախատեսել է, որ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխային պաշտպանություն տրամադրելու գործընթացում ընդգրկված բոլոր պաշտոնատար անձինք իրենց գործողություններում պետք է ելնեն երեխայի շահերի պաշտպանության սկզբունքից:

Լիազոր մարմնի՝ ներկայացուցիչ նշանակելու պարտականությունը գործում է նաև այն դեպքում, երբ առկա են հիմնավոր կասկածներ առ այն, որ ապաստան հայցողը հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության կամ հաշմանդամության հետևանքով ունակ չէ գիտակցելու ապաստանի տրամադրման ընթացակարգի էությունն ու նշանակությունը և արդյունավետ կերպով ներկայացնելու իր ապաստանի հայցը: Ընկալունակության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում լիազոր մարմինը դիմում է համապատասխան մասնագետի, որի եզրակացության հիման վրա որոշվում է ներկայացուցիչ նշանակելու անհրաժեշտությունը: Ընդ որում, ինչպես մասնագետի եզրակացություն ստանալու, այնպես էլ հետագայում ներկայացուցիչ նշանակելու համար անհրաժեշտ է ապաստան հայցողի համաձայնությունը:

Այսպիսով, այս դասի շրջանակներում Ձեզ ներկայացվեցին՝

- ապացուցման բեռի բաշխման կանոնը և այդ կանոնի կիրառման հարաբերական չափորոշիչները,
- ծագման երկրի մասին տեղեկությունների հավաքագրման և գնահատման կանոնները:

Քննարկվեց պաշտպանության կարիք ունեցող հայցողների իրավունքների երաշխավորման սկզբունքը:

Հաջորդ դասում կքննարկվի՝

- ապաստան հասկացության բովանդակությունը:

Մասնավորապես, կանդրադառնանք 1951 թվականի Կոնվենցիայով նախատեսված երաշխիքների ու մարդու իրավունքների միջազգային իրավունքով սահմանված երաշխիքների հարաբերակցության հարցին:

ԲԱՌԱՐԱՆ

Ապացուցման պարտականություն – կողմի պարտականությունն ապացուցելու վիճարկվող պնդումը կամ մեղադրանքը:

«Չփարատված կասկածներն ի օգուտ հայցողի մեկնաբանելու» սկզբունք – ապաստան հայցողի կողմից նշված արժանահավատ, սակայն առարկայական ապացույցներով չհաստատված փաստերը հաստատված համարելուն ուղղված վարչարարություն:

Հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներ – երեխաներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք կամ հղի կանայք կամ միայնակ ծնողներ, որոնք ունեն անչափահաս երեխաներ կամ ծանր հիվանդությամբ տառապող հիվանդներ կամ հոգեկան խանգարում ունեցող անձինք կամ թրաֆիքինգի կամ խոշտանգումների կամ բռնաբարության կամ բռնության այլ ձևերի զոհեր:

Առանց ուղեկցողի երեխա – 18 տարին չլրացած օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, որին չի ուղեկցում նրա մասին հոգ տանող որևէ չափահաս անձ:

Ընտանիքից անջատված երեխա – 18 տարին չլրացած օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, ով անջատված է ծնողներից կամ նրա մասին օրենքի կամ սովորույթի հիման վրա հոգ տանողից:

Արժանահավատության գնահատում – վիզա կամ ներգաղթային այլ կարգավիճակ ստանալու համար ներկայացվող դիմումի վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում ձեռնարկվող միջոց՝ միտված դիմողի ներկայացրած տեղեկությունների համապատասխանությունն ու վստահելիությունը որոշելուն:

Ծագման երկիր – միգրացիոն հոսքերի (կանոնավոր կամ անկանոն) սկզբնաղբյուր հանդիսացող երկիր: Փախստականների միջազգային իրավունքում այս եզրն օգտագործվում է փախստականի քաղաքացիության երկիրն ու քաղաքացիություն չունեցող փախստականի մշտական բնակության երկիրը նշանակելու համար:

1. **Ապաստանի հայցի քննության շրջանակներում ապաստան հայցողը՝**

Ա) Պարտավոր է ապահովել իր կողմից ներկայացվող նկարագրությունների առարկայական ապացուցումը – **սխալ է**: Ապաստան հայցողն իր կողմից շարադրվող նկարագրությունները հիմնավորող կոնկրետ ապացույցներ ներկայացնելու պարտականություն չի կրում՝ բացառությամբ գործի վերաբերյալ հստակ և համակարգված հանգամանքների ներկայացման:

Բ) Ապացուցման իր պարտականությունը կարող է համարել կատարված այն պահից, երբ ներկայացրել է ապաստանի դիմում – **սխալ է**: Ապաստանի դիմում ներկայացնելուց հետո ապաստան հայցողի հետ անց է կացվում հարցազրույց, որին մասնակցությունը ևս ապաստան հայցողի՝ ապացուցման պարտականության կատարման բաղկացուցիչ մաս է:

Գ) Կարող է ներկայացնել բացառապես գրավոր ապացույցներ – **սխալ է**: Ապացույց ներկայացնելու հայցողի իրավունքը կարող է իրագործվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևով:

Դ) Գրավոր կամ բանավոր ձևով ներկայացնում է գործի վերաբերյալ հստակ և համակարգված հանգամանքներ – ճիշտ է: *Հաշվի առնելով փախստականների կարգավիճակի առանձնահատկությունները՝ նրանցից օրենսդրորեն պահանջվում է միայն արժանահավատ տեղեկատվության տրամադրում՝ բացառելով կոնկրետ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը:*

2. Ապաստանի հայցի վարույթի ընթացքում ապաստանի հայցի մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ ապացույցների անբավարարությունը՝

Ա) Լիազոր մարմնի համար հիմք է ապաստանի հայցի վարույթը կարճելու համար – **սխալ է**: Ապաստանի վարույթի կարճման հիմքերը որևէ առնչություն չունեն ապացույցների ձեռքբերման հետ: Միաժամանակ, ապացույցների անբավարարությունը չի կարող հանգեցնել ապաստանի հայցի քննության ընդհատմանը:

Բ) Լիազոր մարմնի համար հիմք է ապաստանի հայցը մերժելու համար – **սխալ է**: Ապաստանի հայցը կարող է մերժվել բացառապես այն դեպքում, երբ առկա են ապաստանի հայցը բավարարելուն խոչընդոտող ուղղակի ապացույցներ:

Գ) Լիազոր մարմնի համար հիմք չէ որոշում չկայացնելու կամ մերժման որոշում կայացնելու համար – ճիշտ է: *Ցանկացած փաստ, որ մնում է չապացուցված, մեկնաբանվում է ի օգուտ հայցողի և, համապատասխանաբար, գնահատվում է որպես դրական որոշում կայացնելու հիմք:*

Դ) Լիազոր մարմնի համար հիմք է ապաստանի հայցի վարույթը կասեցնելու համար – **սխալ է**: Ապաստանի հայցի քննության կասեցման միակ օրենսդրական հիմքն ապաստան հայցողի՝ հարցազրույցին չներկայանալը կամ լիազոր մարմնի հետ համագործակցելուց հրաժարվելն է:

3. «Չափարտված կասկածներն ի օգուտ հայցողի մեկնաբանելու» սկզբունքը նշանակում է, որ

Ա) Հայցող անձի բոլոր այն հայտարարությունները, որոնք հնարավոր չէ հիմնավորել վարչական վարույթի արդյունքում ձեռք բերված ապացույցներով՝ պետք է գնահատվեն որպես հավաստի – **սխալ է**: Նշված սկզբունքը գործում է բացառապես արժանահավատ հայտարարությունների մասով, իսկ եթե առկա է հայտարարությունների սխալ լինելու վերաբերյալ ապացույցներ, ապա ապաստան հայցողն այդ կապակցությամբ պետք է ներկայացնի բացատրություն:

Բ) Որպես հավաստի պետք է գնահատվեն հայցող անձի միայն այն հայտարարությունները, որոնց վերաբերյալ առկա են ապացույցներ, – **սխալ է**: Նշված սկզբունքի էությունը ապացույցների բացակայության պայմաններում փաստերն ապացուցված համարելու մեջ է:

Գ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմինը պետք է ձեռք բերի ապացույցներ, որոնցով կհիմնավորվեն հայցողի կողմից կատարված հայտարարությունները – **սխալ է**: Միգրացիայի հարցերով լիազոր մարմինն ունի ապացույցներ ձեռք բերելու պարտականություն, սակայն նշված սկզբունքը գործում է այն դեպքում, երբ ապացույց ձեռք բերելն անհնարին է:

Դ) Հայցող անձի բոլոր արժանահավատ հայտարարությունները, որոնք հնարավոր չէ հիմնավորել վարչական վարույթի արդյունքում ձեռք բերված ապացույցներով՝ պետք է գնահատվեն որպես հավաստի – ճիշտ է: *Փաստերն առանց ապացույցների ապացուցված համարելու մոտեցումը կարող է գործել ողջամտության սահմաններում, այսինքն՝ երբ վարչական վարույթով ձեռք բերված ապացույցների համատեքստում հայցողի կողմից նշված փաստերն արժանահավատ են թվում և երբ դրանց վերաբերյալ հակառակը հիմնավորող ապացույցներ առկա չեն:*

4. Ապաստանի հայցի իրավունքից կարող է օգտվել՝

Ա) Յուրաքանչյուր չափահաս օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձ - **սխալ է**: Ապաստան հայցելու իրավունք ունի յուրաքանչյուր անհատ՝ անկախ տարիքային կամ այլ սահմանափակումներից:

Բ) Յուրաքանչյուր անհատ, այդ թվում՝ անչափահասները՝ բացառապես ծնողների հետ համատեղ – **սխալ է**: Ապաստանի հայցի իրավունքից լիիրավ կարող են օգտվել նաև անուղեկից կամ ընտանիքից անջատ անչափահասները:

Գ) Բացառապես ապաստանի տրամադրման ընթացակարգի էությունն ու նշանակությունը գիտակցելուն և ապաստանի հայցն արդյունավետ կերպով ներկայացնելուն ունակ անձը – **սխալ է**: 1951 թվականի Կոնվենցիայով ամրագրված փախստականի սահմանումը հավասարապես կիրառելի է բոլոր անհատների նկատմամբ և, ուստի, ապաստանի հայցի իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուրը:

Դ) Յուրաքանչյուր անհատ՝ անկախ մտավոր կամ ֆիզիկական ունակությունների ծավալից կամ տարիքային սահմանափակումներից - ճիշտ է: *Փախստականների իրավունքների պաշտպանությունը կարգավորող օրենսդրությունը երաշխավորում է ապաստան հայցելու յուրաքանչյուրի իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը՝ անչափահասներին և հատուկ կարիք ունեցող անձանց ապահովելով լրացուցիչ երաշխիքներով՝ ապաստանի հայցի վարույթն արդյունավետ իրականացնելու նպատակով:*

5. Անուղեկից կամ ընտանիքից անջատ անչափահասի ապաստանի հայցի դեպքում՝

Ա) Անչափահասի ապաստանի հայցը քննվում է արագացված ընթացակարգով – **սխալ է**: Նման դեպքերում գործի քննությունն իրականացվում է ընդհանուր հիմունքներով, սակայն ի սկզբանե վարույթին ներգրավվում է անչափահասի ներկայացուցիչ:

Բ) Անչափահասի ապաստանի հայցը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմինը – **սխալ է**: Նման դեպքերում խնամակալության և հոգաբարձության մարմինը հոգում է անչափահասի տեղավորման և խնամքի, կրթական հաստատություն ընդունման, ինչպես նաև խնամակալի (կամ) հոգաբարձուի նշանակման հարցերը, իսկ ապաստանի վարույթն իրականացնում է միգրացիայի հարցերով լիազոր մարմինը:

Գ) Ապաստանի հայցի քննության վարույթը կասեցվում է մինչ անչափահասի ընտանիքը հայտնաբերելը կամ խնամակալ նշանակելը – **սխալ է**: Նման իրավիճակը վարույթի կասեցման հիմք չէ, ավելին՝անուղեկից կամ ընտանիքից անջատ անչափահասի ապաստանի հայց ունենալու դեպքում ներգարվված բոլոր պաշտոնատար անձինք պետք է ելնեն երեխայի շահերի պաշտպանության սկզբունքից և հնարավորինս արագ ավարտեն վարույթը:

Դ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմինը նշանակում է ներկայացուցիչ, որը պարտավոր է պատշաճ կերպով ներկայացնել անչափահասի լավագույն շահերը – ճիշտ է: *Ի տարբերություն այն դեպքերի, երբ անչափահասին ուղեկցում է ընտանիքի անդամ, որն էլ կարող է ներկայացնել անչափահասին, անուղեկից կամ ընտանիքից անջատ անչափահասի դեպքում վերջինիս պետք է կցվի ներկայացուցիչ:*

6. Եթե ապաստանի հայցի վարույթի շրջանակներում լիազոր մարմնի մոտ հիմնավոր կասկածներ են առաջ ալիս առ այն, որ ապաստան հայցողը հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության կամ հաշմանդամության հետևանքով ունակ չէ գիտակցելու ապաստանի տրամադրման ընթացակարգի էությունն ու նշանակությունը և արդյունավետ կերպով ներկայացնելու իր ապաստանի հայցը, ապա՝

Ա) Միգրացիայի հարցերով լիազոր մարմինն անմիջապես վարույթին է ներգրավում խնամակալության և հոգաբարձության մարմիններին – **սխալ է**: Նման կասկածները լիազոր մարմնի համար հիմք են համապատասխան մասնագետի դիմելու և եզրակացության ստանալու համար:

Բ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմինն անմիջապես նշանակում է ներկայացուցիչ – **սխալ է**: Նման կասկածներ առաջանալու դեպքում լիազոր մարմինը կարող է դիմել համապատասխան մասնագետի, որի դրական եզրակացության դեպքում միայն լիազոր մարմինը կարող է նշանակել ներկայացուցիչ:

Գ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմինն առաջարկում է հայցողին դիմել փաստաբանի օգնությանը – **սխալ է**: Լիազոր մարմինը պարտավոր է ընկալունակության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում դիմել մասնագետի: Իսկ փաստաբանի օգնությանը դիմելու ընտրության իրավունքը յուրաքանչյուր հայցողինն է:

Դ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմինը դիմում է համապատասխան մասնագետի, որի եզրակացության հիման վրա որոշվում է ներկայացուցիչ նշանակելու անհրաժեշտությունը – ճիշտ է: *Փախստականի սահմանումը՝ ամրագրված 1951 թվականի Կոնվենցիայով, հավասարապես կիրառելի է բոլոր անհատների նկատմամբ, ուստի անձինք, որոնք ունակ չեն ինքնուրույն ներկայացնել իրենց շահերը, պատկան մարմինների կողմից պետք է ճանաչվեն որպես այդպիսին և ապահովվեն ներկայացուցչություն իրականացնող անձանցով:*

7. Անուղեկից, ընտանիքից անջատ անչափահասների, ինչպես նաև ապաստանի հայցը ներկայացնելուն անունակ անձանց համար ներկայացուցիչ է նշանակվում՝

Ա) Միգրացիայի հարցերով լիազոր մարմնի կողմից՝ անուղեկից, ընտանիքից անջատ անչափահասների կամ ապաստանի հայցը ներկայացնելուն անունակ անձի համաձայնության դեպքում միայն – **սխալ է**: Անչափահասների դեպքում ներկայացուցիչ նշանակելու հարցը միանձնյա որոշվում է լիազոր մարմնի կողմից:

Բ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմնի կողմից. անչափահասների դեպքում՝ սեփական նախաձեռնությամբ, իսկ հայցը ներկայացնելուն անունակ անձի դեպքում՝ բացառապես վերջինիս

համաձայնությամբ – ճիշտ է: *Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապաստանի հայցը ներկայացնելուն անունակությունը միշտ չէ, որ կարող է վկայել անգործունակության մասին, վարույթի շրջանակներում ցանկացած միջամտության, այդ թվում՝ մասնագետի դիմելու և ներկայացուցիչ ներգրավելու համար անձը պետք է տա իր համաձայնությունը:*

Գ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմնի կողմից. անչափահասների դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի, իսկ հայցը ներկայացնելուն անունակ անձի դեպքում՝ համապատասխան մասնագետի դրական եզրակացության հիման վրա – **սխալ է**: Խնամակալության և հոգաբարձության մարմինը որևէ դերակատարում չունի ներկայացուցիչ նշանակելու գործում, իսկ համապատասխան մասնագետի լիազորությունները սահմանափակվում են անձի ընկալունակության վերաբերյալ եզրակացության տրամադրմամբ:

Դ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմնի կողմից՝ անկախ այդ անձանց՝ ներկայացուցիչ նշանակելու անհամաձայնության փաստից – **սխալ է**: Ապաստանի հայցը ներկայացնելուն անունակ անձի անհամաձայնությունը լիազոր մարմնի համար ներկայացուցիչ նշանակելուն արգելք է:

8. Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունները գնահատելիս լիազոր մարմնի համար էական նշանակություն ունի/ունեն՝

Ա) Ծագման երկրում իրավիճակի զարգացման միտումներն այն պահից սկսած, երբ անձը դիմել է ապաստանի հայցով – **սխալ է**: Լիազոր մարմինն ընդհանուր գնահատման է արժանացնում ծագման երկրի մասով անցյալ ժամանակահատվածներին վերաբերող տեղեկությունները՝ հետապնդումների երկյուղի պատճառ հանդիսացող իրադարձությունների սկբնավորումից մինչ վարույթի իրականացումը:

Բ) Ծագման երկրի իշխանությունների կողմից երկյուղի պատճառ հանդիսացող իրադարձությունների մասին արված անդրադարձը – **սխալ է**: Լիազոր մարմինը ծագման երկրի վերաբերյալ տեղեկություններ ձեռք է բերում անկախ և հեղինակավոր աղբյուրներից: Մինչդեռ ծագման երկիրը, ՝ որպես այդպիսին, պայմանավորված իր կարգավիճակով, չի կարող հավակնել տեղեկատվություն տրամադրող աղբյուրի կարգավիճակին:

Գ) Ծագման երկրի վերաբերյալ ձեռք բերված առավել ժամանակակից տեղեկությունները – **սխալ է**: Երկրում իրավիճակի զարգացման միտումները գնահատելու տեսանկյունից լիազոր մարմնի համար կարող են վերաբերելի լինել անցյալ ժամանակահատվածներին վերաբերող տեղեկությունները, ինչը չի բացառում անցյալում արձանագրված տեղեկությունների վերհանումը:

Դ) Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների արդիականությունը, ստույգությունը և տարբեր վստահելի աղբյուրներից ձեռք բերված լինելը – ճիշտ է: *Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունները պետք է ամբողջովին արտացոլեն երկրում եղած և առկա իրավիճակը, տեղեկությունները չպետք է հակասական լինեն և պետք է ձեռք բերվեն անկախ, անկողմնակալ և հեղինակավոր աղբյուրներից:*

9. Ապացույցների գնահատման և որոշում կայացնելու փուլում էական է՝

Ա) Յուրաքանչյուր առանձին փաստի հաստատումը կոնկրետ ապացույցով – **սխալ է**: Փաստերը՝ որպես վարույթի ընդհանուր պատկեր, հաստատվում են բոլոր ապացույցների համադրմամբ:

Բ) Ներկայացված փաստերի առերևույթ արժանահավատությունը – **սխալ է**: Փաստերի արժանահավատությունը, ամեն դեպքում, պետք է հաստատվի վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված տեղեկատվությամբ: Միայն այն դեպքերում, երբ որոշակի փաստերի վերաբերյալ

առհասարակ հնարավոր չէ ձեռք բերել որևէ տեղեկատվություն՝ գործում է ի օգուտ հայցողի մեկնաբանելու սկզբունքը:

Գ) Լիազոր մարմնի տնօրինության տակ գտնվող տեղեկատվության հիման վրա ներքին համոզմունք ձևավորելը, որ հայցն առավելապես հավաստի է, քան հակառակը – ճիշտ է: *Ապաստանի հայցի վարույթի առանձնահատկություններից մեկն այն է, որ դրա շրջանակներում (ի տարբերություն, օրինակ, քրեական գործերով վարույթների) փաստերը հաստատվում են հարաբերականորեն՝ վարույթով ձեռք բերված տեղեկատվության ընդհանուր պատկերի համատեքստում:*

Դ) Ապաստան հայցող անձի նշած փաստերի վերաբերյալ միգրացիայի հարցերով լիազոր մարմնի նախնական համոզմունքը – **սխալ է**: Լիազոր մարմնի համոզմունքն էական նշանակություն ունի, սակայն այն ձևավորվում է հայցողի հայտարարությունների և ձեռք բերված այլ ապացույցների հետ համադրման արդյունքում:

10. Լիազոր մարմնի և ապաստան հայցողի առնչությամբ ապացուցման պարտականությունը նշանակում է՝

Ա) Հայցողը պետք է ներկայացնի իր կողմից շարադրված փաստերի վերաբերյալ ապացույցներ, իսկ լիազոր մարմինը գնահատի այդ ապացույցները – **սխալ է**: Հայցողն, ըստ էության, ազատված է ապացուցման պարտականությունից՝ բացառությամբ իրական և արժանահավատ փաստեր շարադրելու պարտականությունից: Լիազոր մարմինն, իր հերթին, բացի ներկայացված ապացույցները գնահատելուց, պարտավոր է նաև սեփական նախաձեռնությամբ ձեռք բերել անհրաժեշտ ապացույցներ:

Բ) Հայցողն ազատված է որևէ գործողություն կատարելու պարտականությունից, իսկ լիազոր մարմինը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները գործի բոլոր վերաբերելի փաստերը պարզելու և գնահատելու համար – **սխալ է**: Հայցողն իհարկե, դասական իմաստով ապացուցման պարտականություն չի կրում, սակայն նա պարտավոր է ակտիվ մասնակցել վարույթին, այդ թվում՝ հարցազրույցին մասնակցելով և հնարավորության սահմաններում հստակ ու համակարգված հանգամանքներ ներկայացնելով:

Գ) Հայցողը պետք է ներկայացնի իր կողմից շարադրված փաստերի վերաբերյալ ապացույցներ, իսկ լիազոր մարմինը, իր հերթին, պետք է ձեռք բերի գործին վերաբերելի ապացույցներ – **սխալ է**: Հայցողն ազատված է իր կողմից շարադրված փաստերի վերաբերյալ առարկայական ապացույցներ ներկայացնելու պարտականությունից՝ բացառությամբ իրական և արժանահավատ փաստեր շարադրելու պարտականությունից:

Դ) Հայցողը պետք է ներկայացնի գործին վերաբերող իրական փաստական հանգամանքների ամբողջությունը, իսկ լիազոր մարմինը պետք է սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի գործին վերաբերելի բոլոր փաստերը պարզելու և գնահատելու համար – ճիշտ է: *Ապաստանի հայցի շրջանակներում գործում է գործի ի պաշտոնե քննելու սկզբունքը, ինչը, իհարկե չի բացառում ապաստան հայցողի պարտականությունը՝ առավելագույնս մասնակից լինել ապաստանի հայցի վարույթին:*